

# ՀԱՅ ՍԿԱՈՒՏՆԵՐ

ՊԱՆՏՈՒԹԵՐԹ  
Բ.Ս.Ը.Ս.Ի  
ԳԻՄՆԵԱԼ 1918 ԻՆ



ORGANE  
DES SCOUTS ARMÉNIENS  
FONDE EN 1918

## "HAI SCOUT"

Ի (ՆՈՐ ՇՐՋԱՆ)

ԹԻԻ 1

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1929

### ՄՂՈՒՄ ՏԱՆՔ ՍԿԱՈՒՏՈՒԹԵԱՆ

որ թերթ մը չէ՛ ՀԱՅ ՍԿԱՈՒՏԸ և անոր ներկայացուցած շարժումը, տասը տարի է որ նա կը կազմեն անոնք:

Ազգեր, որոնք ապահովուած են տնտեսական և դիտական դրաններով, որոնք իրենց տակը ամուր հող ունին, կը տիրապետեն հողին և օդին, նոր միջոցներու մասին կը մը-ամրացնելու համար իրենց տեւականութիւնը: Եւ թագաւորներ, մարաջախտներ ու սպէտներ յարգանքով գլուխ կուտան՝ կարճ տափառով ու սօթառուած թեւերով սա մատանիններու՝ որոնք բարձրացուցած են գրոշակ մը որ ՍԿՍՈՒՏՈՒԹԻՒՆ կը կոչուի:

ՍԿԱՈՒՏՆԵՐԸ, սնա՛ օրուան կարգախօսը ազգերուն: Այդ պզտիկ ասպետները, կուզան ելու մեծերուն՝ զուարթութեան, անկեղծութեան և եղբայրութեան աւետարանը, դարձա- և կանխելու, իրենց հայրերուն գործած աւերները:

Հայը արմատախիլ և ցրիւ եկած աշխարհի մէջ, ենթարկուած ճուլումի և վատասերումի դին, աչքերը դարձուցած չորս կողմ յոյսի և փրկութեան միջոց մը կը փնտռէ:

ՍԿԱՈՒՏՈՒԹԻՒՆԸ, ԱՀՍ՝ ԿԱՐԵՒՈՐ ՄԻՋՈՑ ՄԸ: Ան պիտի տայ հայ պատանիին բարձր սկզբի սկզբունքներ, տոկուն կազմ և շիտակ նկարագիր, լաւատեսութիւն նեղ օրերու ր, դիմադրութեան ուժ ու յաղթանակ կեանքի պայքարին մէջ:

Հայը՝ ուրիշ ազգերէն աւելի, պէտք ունի սկաուտութեան, եթէ Պէտքն Բաուրլ հիմնած ր, հայը պէտք է հիմնէր զայն: Դարերով ճնշումի և խաթարումի ենթարկուած հայը մաքրուե- ր ցեղային արժէքները երեւան բերելու և արժեցնելու համար՝ միջոցներու պէտք ունի:

Պէտք ունի իր իրաւունքները պաշտպանելու, իր ճակատագիրը կերտելու և իր դիրքը ելու ազգերու շարքին մէջ:

Պէտք ունինք սկաուտութեան և սկաուտներու, ոչ միայն մեր ազգային գոյութեան պանուժին համար այլ և մեր թախմոտ և յռետես նկարագիրը լուալու՝ զուարթութեան և տեսութեան արեւով, մեր անհամաձայնութեան և ատելութեան արմատները այրելու՝ սյրական սիրոյ կրակով: Ո՛չ մէկ հայ պատանի զուրս պէտք է մնայ սկաուտական շարքերէն, ի չափ պէտք ունինք անոր:

Ամբուեցէք մեր շուրջ, ուժ տուէք մեզի:

2  
ՀԱՅ ՍԿԱՈՒՏ

73520

2910-9 000



# ՊԱՏԳԱՄ ՄԸ ԸՆԴՀ. ՍԿԱՌԻՏ ՊԵՏԷՆ

## ԱՇԽԱՐՀԻ ԲՈՂՈՐ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒՆ

եղբայր Սկաուտներ,՝

Այս առիթը գրած միջոցիս ձեմպօրին լրա- նալու վրայ է և երբ դուք զանոնք կարգաք — մենք որ երջանիկ կհանք մը ապրեցանք 15 օր իրարու հետ — բոլորդ ալ ցրուած պիտի ըլ- լաք ձեր երկիրները:

Ձեմպօրին պաշտօնապէս վերջացած է, սա- կայն երբ դուք կարծնաք պահել անոր ոգին ձեր մէջ, ան ոչ միայն պիտի ապրի իբր պարզ յիշատակ մը՝ այլ մշտական իրականութիւն մը պիտի մնայ ձեր կհանքի ընթացքին, Մի մոռ- նաք այն ծանօթութիւնները որ հաստատեցիք այդ տասն և հինգօրեայ բանակումի ընթացքին: Գրեցէք միւս երկիրներու ձեր եղբայր սկա- ուտներուն, կարելի եղածին չափ յաճախ և երբ օր մը պատահութիւն ունենաք անոնց եր- կիրները ճամբորդելու, այցելեցէք անոնց և ա- նոնց հետ մնացէք կրցածնուդ չափ երկար մա- մանակ: Որ երկիրն ալ երթաք, պիտի գտնէք բարեկամներ, որոնք երբ նոյնիսկ անձամբ չէին նկած բանակումին՝ գոն նկող իրենց եղբայր- ներէն լած պիտի ըլլան ձեր մասին: Մենք բաւա- կան անձրև և ցեխ ունեցանք բանակումի ըն- թացքին բայց ոչ տխրութիւն: Այս ալ ուրիշ պարագայ մըն է որ միշտ պէտք է յիշէք երբ ձեր տուները վերադառնաք: Գիտցէք որ եթէ ամէն բան ձեր ուղածին պէս չի քալեր, ժպիտ մը և զուարթ եղանակ մը ամէն գծուարու- թիւն կրնան հարթել:

«The Scout» No. 1113 շիմնադիր ընդհ. Պետ August 24. 1929 ՊԵՏԷՆ ԲԱՌԱԸԼ

*Robert Baden-Powell*

Որքան նմանութիւն ընթռնումի եւ թելադրութեան՝ ընդհ. Պետին վերի խօս- քերուն եւ ութը տարի առաջ մեր գրածին մէջ: Ասիկա կը հաստատէ թէ, հայ վարիչները որքան լաւ թափանցած են սկաուտական ո- գիին: Սակայն երբէք չուզեցինք չափազան- ցութեան տանիլ այլասիրական ոգին եւ մեր ամբողջ ուժը նուիրել օտարները զը- բաւելու գործին, երբ անդին ունէինք

շատ աւելի ծանր եւ ստիպողական եւ մեր նիւթական ու բարոյական ատաղձին մեծ մա- սը, եթէ ոչ բոլորը, պէտք էր յատկացնել անոր: Այնպէս ալ ըրինք եւ պիտի ընենք ասկէ ետքը: Ահա թէ ինչ կը գրէինք եւ մենք 1921 Յունիսին, ՀԱՅ ՍԿԱՌԻՏԻ Բ. տարի թիւ 2ին մէջ, իբր խմբագրական:

Մ. Խ.

## ԳՐԶԻՆ ԽՕՍՔԸ

«Սկաուտը եղբայր է ամէն ուրիշ սկաուտի . . .»


Ամենագեղեցիկ խօսքերը և դաւանանքները՝ ապարդիւն կը մնան երբ խօսքին չ'ընկերանար գործը: Ամէն պատանի կրնայ իր մօտիկ սկաուտ ընկերներուն հետ բարեկամութիւն հաստատել. սակայն ասով շատ սահմանափակ գործ մը բ- րած կ'ըլլայ, այսչափով կարելի չէ արդարացնել վերի դաւանանքը, պէտք է լայն սահմանով գործել, պէտք է թղթակցական յարաբերու- թեան մտնել բոլոր ազգերու սկա- ուտներուն հետ: Այս թղթակցութիւններու օ- զուտը ձեր ենթադրածէն շատ աւելի մեծ է: Մի զարմանաք երբ բեմ որ ձեր և ձեր հայ- րենիքի ճակատագրին և ապագային հետ սերտ կապ ունին այդ կարճուկ, երկտող նամակները:

Ասով դուք աշխարհի ամէն կողմը բարե- կամներ կ'ուսնենաք, որոնք ձեր վրայ կը մտա- ծեն և կ'աշխատին ձեզիս և է բանով օգտակար ըլլալ: Տեղեկութիւններ կուտան իրենց երկրէն, իրենց քաղաքէն, իրենց բարեկամնե- րէն, իրենց ընտանեկան սովորութիւններէն, վերջապէս իրենց արշաւներէն և բանակումնե- րէն նկարներ կը փոխանակեն ձեզ հետ: Գուք փոխադարձաբար իրենց բարքերուն, սովորու- թիւններուն կը ծանօթանաք, միեւնոյն ատեն ձեր բարքերը և սովորութիւնները ծանօթա- ցնելով անոնց:

Անոնք ձեր նամակները պիտի կարգան ի- րենց ծնողքին, բարեկամներուն և ծանօթնե- րուն, որոնք իրենց կարգին համակրին պիտի ձեզի, և ձեզմով՝ ձեր ազգին:


Այդ նամակներու և նուէրներու փոխանա- կութիւններով դուք ուզզակի կամ անուզզակի կերպով ձեր նկարագրին թերիները պիտի շը- կէք և լաւ կողմերը պիտի ուժովցնէք. ընկե- րական և ընտանեկան գեղեցիկ սովորութիւն- ներ պիտի ընդօրինակէք...

ՀԱՅ ՍԿԱՌԻՏ Բ. Տարի թիւ 2 Կ. Պոլիս 1921



13 20102 7





**Ա. Հ. Ա. ԹԻՆՆԻ ՆԱՄԱԿԵՐ**

Ողբացեալ Չերազի, եւ Հ. Մ. Բ. Մ. ի Հայաստանի մէջ ունեցած գործունէութեան մասին պատիկ գաղափար մը, եւ նմոյշ մը տալու համար կ'արտատպենք հետեւեալ տողերը եւ մեր տղոց ուշադրութեան կը յանձնենք զանոնք: Սոյն տողերը շատ փոքր մէկ մասն են մեր անձնուէր վահանին նամակներուն, որոնց մնացած մասերը պիտի արտագրենք յաջորդաբար: Ի՞նչ մասին մտաւորը թիւով մը պիտի արտայայտուինք:

Ի. Խ.

**ՀԱՅՐԵՆԻ ՆԱՄԱԿՆԵՐ**

Ալեքսանտրապոլ 7 Օգոստոս 1921

Սիրելի տղաք,

Ձեր կողմէ զրկուած սկաուտական լուսանկարները ստացանք: Ընդամենը յոգ րոպէին, ըսկաուտներու բանջարանոցէն քաղուած մեր առաջին վարուէները կը ճաշակէինք:

Մտածեցինք թէ ի՞նչքան լաւ կը լինէր եթէ հնարաւորութիւն ունենայինք այս պտուղներէն զրկելու ձեզի:

Լուսանկարները տարի ննջարան, տղաքս թափուեցան գլխուս եւ մէկիկ մէկիկ հարիւրաւոր ձեռքերէ անցան: Խեղճ տղերքը հիացան տեսարաններուն եւ կը հարցնէին. «Պարոն ջան, մեզ ե՞րբ պիտի տանիս Պոլիս, հա՞ Պարոն ջան...»:

Սակայն ես ու ընկերս խորին մտահոգութեամբ զիտեցինք որ քառթերուն վրայ զարնուած կնիքը մեր անասան Մասիսը չէր, այլ երեք մասի բաժնուած նշան մը:

Այս տեղ ամէն սրահի ճակտին, «Բարձրացիր Բարձրացուր» ին գունագեղ պատկերները

կը փայլին, մինչ գուք, գէթ այդպէս կը հետեւեցնեմ, վազ էք անցեր այդ սարէն, որ ջրհեղեղի տակ չէ մնացեր, եւ որ արեան տակ ալ չպիտի մնայ:

Վերջապէս գուք մեկիկ լաւ զիտէք: (\*)

\*\*\*

Մենք շատ լաւ ենք կը բարձրանանք ու կը բարձրացնենք: Ձեռ ուզեր շատ խօսիլ: Մեր մասին հարցում ուղղեցէք նամակիս հետ եկող ամերիկացի քննիչներուն:

Անցեալները Թիֆլիսի սկաուտները եկան մեզ այցելութեան, եւ անցան Երեւան, որանդէն վերադարձին երեք օր մեզի հետ պիտի ըլլան: 60 սկաուտ էին, 20 սկաուտուհի եւ 10 խմբագետ ժամանակը քիչ էր եւ շուտ անցաւ:

Անոնց ուղղութիւնը ցուցադրական էր (բուրգեր, հնարքներ, եւայլն), մինչ մերոնցը զուտ սկաուտական: Մերոնց միօրինակ, մաքուր, կայտառ երեւոյթէն իրենք խորունկ տպաւորութիւն կրեցին: Գեղեցիկ դրօշներ ունէին, որոնցմէ մենք զուրկ ենք, որովհետեւ կտոր չունինք, շատ դրօշներու, ճակատներու, կուրծքերու վրայ, մեր նշանակը ընդելուզուած էր պոլշեիկեան զինանշանին (մուրճ ու մանգաղ) եւ կարմիր աստղին հետ:

Ալեքսանտրապոլի քաղաքի սկաուտներն ալ եկած էին Գրոշակ չունին, «բարձրացիր բարձրացուր»ը եասախ է: «Պատգում» (պատանի գոմունիստ) անունը կը կրեն, եւ երկու մատով կը բարեւեն, որովհետեւ սկաուտական երգումին առաջին յօդուածը չեն ընդունիր, տղաքս երկու մատով բարեւը մերժեցին աւնել ...:

Առ այժմ, Պոլիս վերադարձս ցորչափ ինձմէ կախուած է, միտք չունիմ: Ուրիշ խնդիր եթէ տղաքս ալ հետս բերեմ: Բայց Պոլիսէն ալ անգին կ'անցնինք, որովհետեւ լաւագոյն ապագայ խոստացուած է մեզի:

(\*) Մեր սիրելի Չերազը սխալի մը զոն կ'երթայ Արարատակիր նշանակը շնչուած կարծելով, այդ նշանակը կայ ու կը մնայ հայ սկաուտի ճակտին վրայ: Ի. Խ.



Այս պայմաններու մէջ, ես ալ շատ լաւ եմ, հոգիով և մարմնով երիտասարդացած:

\* \* \*

23 Յգոստոս

Երեւան երթալու ծանօթացալ այնտեղի սկաուտական դրութեան, որ շուտով մեծ համեմատութիւն պիտի ստանայ թերեւս մինչեւ 1000 հաս որբանոցային սկաուտներ հասնին: Երբ որբանոցային մէջ տուի կեանքիս առաջին դասախօսութիւնը: Եւ որովհետեւ ես չէի կարող հաշտուիլ այստեղի ձեռնարկս թողնելու և Երեւան մնալու մտքին հետ, շտապ կերպով դրեցի Եզնիկին որ անմիջապէս թաւրիղէն դայ և գործը ստանձնէ, հակասակ պարագային ինքնակոչները շատ են:

Երեւանի որբ սկաուտներուն վրայ M. Dewis անունով ամերիկացի մը կայ, որ շատ լուսամիտ, համակրելի և համեստ անձնաւորութիւն է, և շատ փոզովրդական՝ ազոց մօտ: Սակայն մեր լեզուին անսեղեակ լինելը անհրաժեշտ կ'ընէ որ հայ մարզիչ մը գործակցի իրեն, և պարզ է որ Եզնիկէն լաւը տրամադրելի չէ:

Մինչեւ անոր գալը, օգնական դրկեցի Երեւան, երեք սկաուտներու հետ, որ պէսզի հսկէ կազմակերպութեան և մարզանքին: Երբ վերադառնայ, նորէն ես պիտի երթամ 10—15 ազաներով, փորձեր կատարելու և մարմնակրթական ցուցմունքներ տալու համար և այսպէս շարունակաբար մինչեւ որ Եզնիկը գայ:


Պէտքն Բաուրլի նամակը հանդիսաւորապէս կարգացուեցաւ և պատին վրայ ցուցադրուեցաւ մեր ընթերցարանին մէջ:

Մեզ այցելող զանազան Ամերիկացի քրնիչներն ալ լաւ տպաւորուեցան, և խոստացած են ի նպաստ մեզ յուզել և կապ հաստատել տալ Ամերիկայի սկաուտական շրջանակներու:

Հայաստանի արտա-որբանոցային սկաուտական դրութիւնը քաջալերական չէ:

Խնդրեմ փութացուցէք գունաւոր կտորներ, դրօշակներու համար, նաեւ բոմբ մը, գունդ մը, երեք ֆութպօլ, Պէյզպօլի գնդակներ միայն և Պասքէթպօլի գնդակներ ստացանք վերջերս Ամերիկայէն:

ՎԱՀԱՆ ՉԵՐՍՁ





**ՄԵՐ ՄԱՍԻՆ ՕՏԱՐՆԵՐՈՒ ԳՆԱՀԱՏՈՒՄԻ ՆՄՈՅՆԵՐ**

**Ն Ա Մ Ա Կ Մ Ը**

Ներկայիս Հայաստանի մէջ գոյութիւն ունի սկառտական շարժումը, որուն հիմը դրած եւ զարգացուցած են Շ. Մ. Ը. Մ. ի ներկայացուցիչները: Անոնք ներկայիս Պիյոնէր անունը կը կրեն որ իսկական մեր հիմնած սկառտութիւնն է բոցի դաւանանքի քանի մը տարբերութիւններէ: Ուրիշ առթիւ պիտի անդրադառնանք Հայաստանի սկառտական շարժումին վրայ:

Դերձովակալ Թէսիկը որ Պոլսոյ շուրիքը խարսխած անգլ. քինկ ճօրն մարտանաւին իբր հրամանատար եւ իբր Անգլիոյ ճօլային սկառտներու ընդհ. պետ՝ մեր սկառտներուն հետ մօտէն շփուած ունեցած եւ իր հիացումն ու համակրութիւնը յայտնած էր անոնց կարգապահութեան եւ ժիր ու կայտառ կերպարանքին համար, չէ մոռցած զանոնք եւ պատասխանելով իրեն գրուած նամակի մը անհա թէ ի միջի այլոց ինչ կը գրէ խմբապետ Գ. Ճօլալեանի, վերջիշելով մասնաւորաբար Գուլէլի որբանոցին սկառտներուն իրեն ըրած ընդունելութիւնը եւ վոյրկենարար պատրաստած քարտն:

Սէլլան, օգոստոս 20, 1929


Սիրելի Սկառտ խմբապետ,

Ձեր նամակը հազիւ հիմա է որ ստացայ որ զրկուած էր Անգլիոյ ճամբով: Ներկայիս այս տեղի ընդհանուր հրամանատարն եմ եւ հետեւաբար ձեր նամակը չկրցի ժամանակին ստանալ: . . . Անտարակոյս չափէն աւելի լաւ կը յիշեմ Գուլէլի որբանոցը: Անոնք ինծի պատրաստեցին որ մը մարզադաշտին վրայ լաւագոյն գաւաթ մը քաքած զոր երբեք խմած ըլլամ: Հիացմամբ կը մտածեմ թէ այդ բոլոր տղաքը զոր հոն ճանչցայ ինչ եղած են հիմա: Շատ կը ցաւիմ այս տարուան ձէմպօրիէն հետու գտնուելուս համար որովհետեւ բոլոր միւսներուն մասնակցած էի . . . :

Արեւել. Շնկաստանի Նաւակոյանի Ընդհ. Հրմնոր.

*William J. Sturges*

Via Armenia



Դերձովակալ Թէսիկը Գուլէլի որբանոցին մէջ կը հերքասիրուի սկառտներէն:

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԳԻՔԹՐՆ ԵԱՐՈՅԻ**

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆՊԱՍԱՄԱՏՈՅԻ ԿՈՎԱՍՍԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՁԻՆ

Սոյն յայտարարութիւնը քաղած ենք, այն բանախօսութենէն որ ըրած է Մր. Եարոն 4 Մայիս 1922ին Բերայի Ազգ. Մատենադարանի սրահին մէջ, Պատրիարքարանի կողմէ իրեն ի պատիւ տրուած թեյասեղանին առթիւ:

Հոս հանոյքով կը յիշենք որ Մր. Եարո մասնաւորապէս մեր սրտին մօտիկ է այն պատճառաւ որ մեր դիմումին վրայ, սիրով ստանձնած էր Թիֆլիսի Հայ սկառտներու պատուակալ նախագահութիւնը: Ծ. Խ.

... Կ'աշխատինք մեր բոլոր միջոցներով, մեր գործը Հայերուն հետ է, մենք անոնց գործակատարներն ենք:

Երեւանի մէջ ունինք 4000 որբեր. էջմիածնի մէջ՝ 600-1000: Ալեքսանտրոպոլի յըջակաները ունինք որբանոցներու երեք մեծ կեդրոններ, 250 շէնքերով եւ ընդամէնը 14,000 որբերով: Ասկէ գատ քաղաքին մէջ ալ ունինք 2000 որբեր: Զալալօղլուի մէջ 4000, քարաքիլիսէի մէջ՝ 2000: Մեր խնամած որբերուն ընդհանուր թիւը կը հասնի 23,000ի: Թիֆլիսի սէջ ալ կը խնամենք 10,000 հայ կիներ եւ երախաներ:

Սկիզբի օրերուն, երբ երախաները կը հաւաքէինք մեր որբանոցներուն մէջ, չափազանց մեծ դժուարութեանց կը հանդիպէինք: Երախաները, գրեթէ ամէնքն ալ տիրող պայմաններուն հետեւանքով խաթարուած էին: Դրժուար բան մըն է, գողութեան եւ ստախօսութեան վարժուած երախաներու նկարագիրը շինել: Այս տեսակէտով, սկառտիզմը նախախմական դեր մը կատարեց: Մեր որբանոցներուն մէջ ունեցանք Պոլսէն եկած մարզիչ երիտասարդներ որոնց կը պարտինք մեր երախաներուն՝ այսօր դէպի լաւը ենթարկուած փոփոխութիւնը...



# ՍԿԱՌՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏ ԶՕՐ. ՊԷՏԸՆ-ԲԱՌԻԸԼԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

## ՀԱՅ ՍԿԱՌՏՆԵՐԸ



## ARMENIAN BOY SCOUTS

Վերջերս լուր առի Հայաստանի Սկաուտներէն Ալէքսանդրապոլի մէջ՝ Կազաչի Բօսա ըսուած վայրէն, 6 խումբեր կան, ամէն մէկ խումբ 40 հոգիէ բաղկացած:

Գրեթէ տարի մը առաջ այս աղաքը, անկիրթ, աղտոտ արարածներ էին. այնօր կ'ըսեն թէ ազնիւ, մաքուր ու բարեձեւ երիտասարդ աղաքներ եղած են և արժանաւոր կերպով պահպանութիւնը կ'ընեն իրենց գտնուած միջավայրին:

Պօքսի և Ծուռպոլի մեծ փափաք ունին և այս երկու խաղերն ալ անգլիական օրէնքներով կը խաղան. ամէն աղայ ունի անհատական տետրակ մը ուր գրուած է իր և ծնողքին անունը, տարիքը, սկաուտական աստիճաններու և վարձատրութեանց թուականը. մասնաւոր երկու էջեր կան մին ոսկի էջ ուր կ'արձանագրուին աղուն գործած ազնիւ արարքը, և սև էջ մը ուր պիտի արձանագրուի գործուած անպատուարեր արարքը:

Յանկ մը կայ ուր արձանագրուած են իրեն արուած բոլոր գոյքերը: Սկաուտները կը պահեն մասնաւոր արձանագրութեան տետր մը նշանակելով իրենց անօրեայ բոլոր գործունէութիւնը:

Հայ սկաուտներու նշանաբանն է «Բարձրացիր Բարձրացուր» որ կը նշանակէ ինքզինքդ կատարելագործէ եւ յետոյ բարձրացուր ուրիշները. ճշմարտիւ հետեւելիք լաւ նշանաբան մը որ և է երկրի սկաուտի համար:

Անոնց համար ամենախիստ պատիժն է սկաուտական գաւազանին գործածութեան արգիլումը որոշ թուականի մը համար:

Ես կը տեսնեմ թէ հայ սկաուտները, սկաուտական ոգի ունին. որքան ատեն որ ճշմարիտ հպարտութեամբ մը կը կրեն իրենց, սկաուտական գաւազանները:

I HAVE just heard from the Boy Scouts in Armenia, at a place called Kazatchi-Post, near to Alexandropol. There are six troops of them each about forty strong. Little more than a year ago these boys were wild, dirty, half-starved urchins. To-day they are described as fine, clean, upstanding young fellows taking their turn of duty in guarding their post.

They are very keen on boxing and football, both strictly according to British rules. Each boy keeps a book which records all about him, his name, age, parents, date of Scout promotions and awards. There is a «Golden Page,» showing any specially good action done by him, and also a «Black Page,» on which any bad action would be recorded.

There is a list of all equipment that has been issued to him. The Scout keeps a diary in the book in which he puts down any Scout ideas that he has learnt or Good Turns carried out each day and so on.

The motto of the Armenian Scouts is «Rise and Raise,» It means «Improve yourself and help others to rise.»

Not a bad motto for any Scout to follow.

Their worst Scout punishment is to deprive the Scout of his right to carry his staff for a certain number of days.

That shows to me that those Armenian boys have got the true Scout spirit since they take real pride in their Scout staves.

«The Scout» No 744, 1922





**G. DESJARDINS**  
Commissaire National  
des Scouts Français

ԱԶԳ. ՊԱՏՈՒԻՐԱԿ  
ՖՐԱՆՍ. ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ



**K. HAGOPIAN**  
Chef National  
des Scouts Arméniens

ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏ  
ՀԱՅ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ

OUR CHIEF  
**LORD R. BADEN POWELL,**

ՍԿԱՈՒՏՈՒԹԵԱՆ  
ՀԻՄՆԱԴԻՐ  
ՊԵՏ



### ԱՆԵՐԵՒԱԿԱՅԵԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍԿԱՌԻՏ ՄԸ Ե՛րբ ձախ ձեռքովը կը բարեւէ:  
— Ե՛րբ աջ ձեռքը թշնամիի մը կողմէ կուտըրուած է:

ՍԿԱՌԻՏ ՄԸ Ե՛րբ Էկրնար շարքերուն մէջ ուղիղ կենալ:

— Ե՛րբ գերուծեան միջոցին ստացած վէրքերուն հետեւանքով կբաժն է:

ՍԿԱՌԻՏԻ ՄԸ Ե՛րբ ներելի է չի ժպտիլ:

— Ե՛րբ անխիղճ տանջանքի հետքեր քարացուցած են անոր շրթներն ու դէմքը:

Հիմա դանք պատմութեան: Հայաստանի տղաքը պատրաստ են սկառուտանալու: Անոնց օգնելու մասին ի՞նչ պիտի խորհէիք: Եթէ տեսնէիք պատանութեան տխուր բեկորներ, որ դէպի ձեզ կը դիմեն, պատանիներ որ իրենց անկերպարանացած շրթներով կը ջանան ժպտիլ և ձախ ձեռքով տալ իրենց սկառուտական բարեւը, քանի որ աջը կորսնցուցած են . . .

Մեր երկիրը հայոց հանդէպ ցոյց տուած իր առատաձեռնութիւնով աշխարհը կը հիացնէ: Հարիւրաւոր որբանոցներ հիմնուած են և բազմաթիւ հազարաւոր մանուկներ կը նպաստաւորութիւն ամերիկեան նուէրներով: 60.000 ի մօտ որբ տղաք կան, որոնց դիտաւոր օժանդակութիւնը Ամերիկայէն կուգայ: Այդ տղոցմէն հազարաւորներ հիմա սկառուտական տարիքի մէջ են և կ'ուզեն սկառուտներ ըլլալ, անոնցմէ մեծ մասը կը փափաքին ըլլալ՝ մինչ ամէնքը պէտք է որ սկառուտ ըլլան:

Կարելի է որոշ կերպով տեսնել թէ ահռելի պատերազմին զոհուած այդ ընկճուած տղոցմէ ինչ արդիւնք կրնայ ստացուիլ: Այդ տղաքը կրնան ամերիկեան սկառուտական խումբերուն հաւասարիլ գործնականութեան, բարեկրթութեան և քաջութեան տեսակէտով:

Ամբողջ տարին, ամէն սկառուտ օրական պարտականութեան գլուխն է: Ութսուն որբանոցներու ամէն մէկուն մուտքին առջեւ սկառուտ մը պահակ կեցած է ամբողջ օրը, անծանօթները առաջնորդելու և անփափաքելի մար-

դերու մուտքը արգիլելու համար: Որբանոցները վիթխարի բանակատեղի մը կը կազմեն և որուն սահմաններուն կը հսկեն հայ սկառուտներ, և չեն թողուր որ փոքր տղաքը շրջին թափառական: Սկառուտները ստիկանի պարտականութիւն կը կատարեն: Անցեալ տարի երբ ժանտախտ կը տիրէր Ալէքսանդրաբոլ քաղաքի մէջ, այս սկառուտները կը հսկէին հսկայ բանակատեղիին ութսուն զուռներու առջեւ, ամբողջ երկու ամիս, արգիլելով առանց պաշտօնական արտօնագրի ամէն մուտք և ելք . . .

Հայաստանի սկառուտներու ընդհանրութիւնը շուրջ 4000 է. հոն տակաւին հազարաւոր սկառուտներու նախանիւթ կայ: Այդ երկիրը, պէտք է ձեզ ըսել որ, սկառուտներու կը կարօտի, և այդ տղաքը սկառուտութեան կը կարօտին: Աստուած իմ, որքան մեծ է իրենց այդ կարօտը: Այդ երկրին մէջ իրենց համար աշխատութենէ և տառապանքէ տարրեր բան չկայ: Ուրեմն անոնց օգնենք որ սկառուտներ ըլլան:

Հայ պատանին ձեզմէ կը սպասէ կատարել սկառուտական դաւանանքը:

«Boys Life» W. B. Ashley  
may 1922, page 48

Եւ այսօր, եօթը տարի ետքը, որքան հայ պատանիներ կան աշխարհի չորս կողմը ցրուած վրաններու, գաղթակայաններու, սա փառաւոր փարիզի խնդրուած օթէլներու եւ նոյն իսկ հանգստաւէտ բնակարաններու մէջ որոնք պէտք ունին սկառուտ ըլլալու, փրկուելու համար իրենց հակառոջապահիկ միժնորութեն, անկարգապահ միջավայրէն եւ մեղկացուցիչ ու մաշեցնող շրջապատէն: «Այդ տղոցմէն հազարաւորներ հիմա սկառուտական տարիքի մէջ են, եւ կ'ուզեն սկառուտ ըլլալ եւ ամէնքը պէտք է որ ըլլան»: Այո՛ պէտք է որ ըլլան պէտք է սկառուտացնել զանոնք՝ ազգին, ցեղին եւ մարդկութեան շահուն համար: Ո՛վ պիտի աջակցի մեզի անշահախնդիր ոգիով:





# ՖՐԱՆՍԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՈՒԻՐԱԿԻՆ Խ Օ Ս Ք Ե Ր Ը

Այժմ պէտք է տարածել բոլոր աշխարհի մէջ ձեմպօրիի բարի կամեցողութեան ոգին, սկսելով շուրջիններէն: Վերջին օրը Պէտրն Բաուրը Թաղեց «պատերազմի կացինը» նշանաբանը ատելութեան որ իրարմէ կը հեռացնէ մարդիկը, ինչպէս որ կացինը կանչատէ ծառի մը բունը իր արմատէն: Յետոյ բաժնեց ոսկի նետեր, որոնք կը ներկայացնեն այն հիանալի ծառայութիւնները զորս սկսուածները

պարտին իրենց շուրջիններուն: Արձակենք ամէն կողմ մեր մարդկային կոչը, խաղաղութեան եւ եղբայրասիրութեան նետերու պէս:


Բոլոր աշխարհի կը հաւատայ սկսուածից մին: Ըկանք ուրեմն նոր ասպետները մարդկութեան՝ որոնք կ'ապրին իրենց Աստուծոյն եւ եղբայրներուն համար:

Կ. ՏԵԺԱՐՏԵՆ

*Guerrillazjainig*



Աղջիկ սկսուածներու Գոլոմպի խմբակը




Փարիզի Հայ սկսուածներն խմբակ մը



Փ Ա Ր Ի Զ Ի Հ Ա Յ Ս Կ Ա ՈՒ Տ Ն Ե Ր ՈՒ Խ ՈՒ Մ Բ Ը





ՄԵՐ ԳՈՐԾՈՒՆԷՌԻՑԻՆԸ ԻԶՄԻՐԻ ԴԷՊՐԷՆ ԵՏՔԸ

### ՍԿԱՌՒՏԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ

#### ՅՈՒՆԱՍՏԱՆ

1922ին, Իգմիրի դէպքերու նախօրեակին, կազմակերպած էինք «Ընդհանուր Սկառուական Բանակում Յուցահանդէս» մը Պոլսոյ Վասփորի ընդարձակ անտառներէն մէկուն մէջ, սոյն ջուցահանդէսը, սկառուական տեսակէտով գլուխ գործոց մըն էր որ, կրնար հասարակ Միջազգային Ճեմարինն եւ որ օտարներն իսկ հիացան: Նկարագրութիւնը պիտի տանք յաջորդութիւնով:

Սոյն ջուցահանդէսէն ետքը երբ Պոլսոյ գաղթը սկսաւ, կեդրոնի գրասենեակը անմիջապէս ձեռնարկեց, Առաքելութիւն մը դրկել Յունաստան, գաղթականներու գետեղման գործին աջակցելու համար: Մեր պատուիրակները՝ սկառու խմբագրութեանը կազմուած Յամբայ ինկան դէպի Սելանիկ, Իրենց հետ տանելով դեղորայք, հագուստեղէն եւ առատ Պուրթ եւ հին լրագիրներ՝ գործածելու համար խոնարհեան եւ ուրիշ պիտոյքներու: Անոնք հոն ետանդով գործի սկսան, գաղթականները տեղէ տեղ փոխադրել, հագուստի եւ ուտեստեղէնի բաշխում, վրաններու գետեղում են: Առողջապահական ձեռնարկներու լայն չափով աջակցեցան՝ ազգային կազմակերպութիւններու կողքին զանազան բաղադրներու մէջ: Փոստի գործը որ բաւական խառնակ դրութիւն մը ունէր, ձեռք առին մերիները եւ կարգի դրին, ապահովելով նամակներու եւ Ամերիկայէն եկած չէրերու յանձնումը իրենց բուն տէրերուն: Անոնք հոն սկսան սկառուական կազմակերպութեան, մասնաւորապէս ԱՅՆՔի եւ արուարձաններու մէջ, բաւական օգտակար եղան այս տեսակէտով ալ: Մինչեւ այսօր Յունաստանի շարժումը կայ ու կը մնայ, իրենց մամուլն իսկ ունին անոնք:

#### ՅՐԱՆՍՍ

Նախ քան գաղթը, Շ. Մ. Ը. Մ. ի մասնաճիւղ մը գոյութիւն ունէր Փարիզի մէջ որ, կը բարդէր միայն մարզականով: Նոր գաղթականութեան միջոցին փարիզ հասան Շ. Մ. Ը. Մ. ի անդամներ եւ սկսան կազմակերպել գործը լայն ասիմանով: Սկառուական կորիզ մը կազմուեցաւ եւ մէկ քանի տարիներ այդ կորիզն է որ շարժումը պահեց, որոնք անցած տարի՝ այցելութիւն մը տուին Անգլիա: Անգլիոյ սկառուական կեդրոնը որ ԹԻՍԻՆ ի վեր ծանօթ էր մեր շարժումին եւ գնահատականներ դրկած էր մեզի Պոլիս եւ Հայաստան ինչպէս եւ Շիմնադիրը, Զօր. Պ. Բաուրլ իր պաշտօնաւորութիւն մէջ մասնաւոր խմբագրականով եւ ուրիշ գրութիւններով ներքոյն էր մեր նշանաբանը մեր գործունէութիւնը եւ ոգին, Լոնտոն այցելող մեր սկառու:

Ներք սիրով ընդունեցան եւ փաստով տեսան մեր գործը՝ եւ ոգին՝ տրամադրութիւն ջոյց տալով ընդունիլ զանոնք Համասկանուական խմբաւորումին (Ճեմարի): Այս մասին յաջորդով կուտանք ընդարձակ տեղեկութիւն:

Մարտէյի, Լիոնի, Վիենի, Տէսի, Վարնայի եւ ուրիշ ֆրանսական բաղադրներու մէջ եւս կազմուեցան Շ. Մ. Ը. Մ. ի ճիւղեր, որոնց սկառուական շարքերը չը կրցան պէտք եղածին պէս զարգանալ եւ տարածուիլ նիւթական եւ հայ գաղթականներն անստոյգ վիճակին պատճառով:

Ներկայիս, Միութիւնը ետանդով ձեռք առած է գործը եւ յետոյ է որ ֆրանսայի բոլոր գաղութներուն մէջ պիտի կազմուին սկառուական եւ գայլիկներու խումբեր եւ շարժումը պիտի հիմնաւորուի ու պիտի բալէ՝ Միութեան ոգին համապատասխան ձեռով:

#### ՄԻՒՍ ԵՐԿԻՐՆԵՐԸ

Բոլոր միւս երկիրները, ուր կայ հայ գաղութ, շարժումը գոյութիւն ունի, ինչպէս, Պելճիգա, Բուճանիս, Պուկարիս, Սուրիս, Արժանիս, Մերսիկա, Եգիպտոս, Ամերիկա, Գանատա, Պարսկաստան, Հայաստան:

Նորակազմ կեդրոնը, ձեռնարկած է բոլոր այս շրջանները իրար կապելու. նոր շրջաններ եւ ճուղեր կազմելու եւ գործը ետանդուն կերպով առաջ տանելու համար:

#### ՆՈՐ ՄԱՍՆԱՃԻՒՂՆԵՐԷՆ

ԱԼՅՈՐՎԻԼԻ նոր կազմուած՝ Շ. Մ. Ը. Մ. ի մասնաճիւղը՝ որուն սկառուական վարիչն է Պ. Ժիրայր Մինժանճեան, ետանդով գործի սկսած է:

Կազմուած է սկառուներու եւ Գայլիկներու խումբեր: Կիրակի, 22 Սեպտեմբ. ըն ըսան սկառուներ առաջին անգամ հագուած՝ արշաւի ելած են գիւղին ժողովայն դաշտերը: Անոնք երգերով եւ հուճարներով անցած են հայոց թաղէն ոգեւորելով բոլորը: Արշաւի միջոցին՝ խմբապետը տուած է սկառուական դասախօսութիւններ եւ տեղի ունեցած են հրահանգիչ խաղեր: Նոյն միջոցին դաշտ եկած են ֆուտպոլի խումբեր եւ մարզիկներ, վարչութեան անդամները եւ ծնողքներ, մօտ հարիւր քսան հոգի բազմութիւն մը գեղեցիկ եւ օգտակար օր մը անցուցած են: Այս առթիւ տեղին վարչութիւնը շնորհակալութիւն կը յայտնէ Պ. Պ. Գարայեան եղբայրներու որոնք սիրայօժար կերպով նուիրած են սկառուական հագուստները եւ տեղւոյն հայերէն Պ. Պէրպէրեանի որ իր մէկ շէնքը սիրով տրամադրած է Շ. Մ. Ը. Մ. ի տեղին մասնաճիւղին իբր կեդրոն եւ հաւաքատեղի:

Մօտ օրէն ուրիշ պատանիներ ալ պատրաստուած են ստուարացնելու խումբը:



ՄԵՐ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ՆԵՐԿՍՅԻՍ

## ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ

Այս տարի Յուլիսին փարիզի «Բուժանք» թերթի նախաձեռնութեամբ եւ Հայ կարմիր խաչի օժանդակութեամբ կազմակերպուեցաւ պատանիներու գիւղագնացութիւն մը մէկ ամսուան համար: Հ. Մ. Ը. Մ. ի սկառուական վարչութիւնը յանձն առաւ այս գործը գլուխ հանել սկառուական բանակումին միացնելով զայն:

Բանակումը տեղի ունեցաւ Մանշի եզերքներէն Ստելլա Բլաժի մէջ, ուր սկառուներու կողքին ընուծիւնը վայելեցին ոչ-սկառու պատանիներ եւ տարեցներ:

Գնահատելի են սկառու խմբապետ Պ. Հայկազ Աբէլեան եւ իր ընկերները, որոնք իրենց կարելին ըրին սոյն բանակումը օգտակար եւ հաճելի դարձնելու համար:

Յաջորդով կուտանք ընդարձակ տեղեկագիրը:

Հ. Ս.

## Յ Ո Ւ Շ Ե Ր

### ՍՏԵԼԼԱ ԲԼԱԺԻ ԲԱՆԱԿՈՒՄԷՆ

1 թգոստոս — 1 Սեպտ. 1929

40ի մօտ հայ սկառուներ ապրեցանք 1 թգոստոսէն մինչեւ 1 Սեպտեմբեր Հ. Մ. Ը. Մ. ի սկառուական վարչութեան ծրագրած բանակումէն Սթէլլա-Բլաժի մէջ:

Ի՞նչ գեղեցիկ օրեր, եռանդուն կեանք ու

արդիւնաւոր աշխատանք, կը վերջիչեցնեն այս երեք անունները այն ամէն անոնց, որ մաս առին այդ բանակումէն:

Երազի մը նման պիտի յիշենք այն 3 առաջի օրերը, ուր՝ տեղատարափին տակ, կը բուսնէր, կը ծլէր ու կը ծաղկէր մեր վրանաքաղաքը. այս երազի մը նման պիտի յիշենք Անփետուր Սագը ընկերակցութեամբ Շատակեր Հնդկահային, մուկերու նման թրջուած գնումէ վերադարձին, պարէնի ծանր բեռներու տակ կքած, ուր՝ այդ միջոցին Թափառական Եղջերուն իր շուրջը ունենալով Չայլամը, Բուն, Կովը, Բնագեղջիւրը, եւ Պատիկ Էշը և շատ մը թօթեմաւոր կամ ո՛չ սկառուներ, բահ ու բրբրչով, կացինով ու վրձինով, բանակավայրին վերջին զարդարանքը կուտային: Մինչդեռ անդին, մեր համբաւաւոր խոհարարը Հաստ-Կաղնին իր օգնականներով 50 հոգիի համար փառաւոր լուփիխարտիկ (փլաքի) մը պատրաստելու զբաղած է, անդին Գիրուկ Աղուէսը, արագաշարժ հրիային ու դանդաղաշարժ ձագարին ընկերակցութեամբ 50 հոգիի փայտ ժողվելու *corvé* գացած են և չի մոռնամ ըսելու որ մեր Պ. Ամբակումն ալ «Հայ Սկառու» թերթին ըստանորդ գտնելու ետեւէն կը վազէր, իսկ նախկին մօրուսաւոր ու այժմու անմօրուս փիղն ալ միշտ անբաժան Շատակեր Հնդկահային՝ իրենց մարտողութիւնը դիւրացնելու, ախորժակը սրելու նպատակով կը մագլցէին Քիւքի աւազուտ բարձունքները:

Այո՛ երազի մը նման պիտի յիշենք,







ՄԱՐՄԷՑԻ ՀԻՆ ՍԿՈՒՏՆԵՐԷՆ ԽՄԲԱԿ ՄԸ

արեւուն կենսատու ճառագայթները ու շոճինե-  
րու և կաղնիներու սթափեցուցիչ շուքը՝ ուր  
«Հայաստանի Հրապարակ»ին, «Հ.Մ.Բ.Մ.»ի պո-  
զոտային, «Անդրանիկ», «Չերազ», «Ճիգմէճեան»,  
«Յակոբեան» փողոցներուն վրայ ման  
կուզայինք մեր հանգստի պահերուն, և երբ  
մեր գործերը ու դասախօսութիւնները աւար-  
տած՝ կը բռնէինք Մանչի ճամբան, զովանալու  
և կազդուրուելու համար, լողանքէն վերջ  
կ'ուղարկէինք մեր եղբայրական ողջոյնները  
Մանչի ափէն մեր բոլոր հայ և միջազգային  
եղբայրներուն:

Հիմայ, սիրելի սկաուտներ, մենք որ հոն  
ապրեցանք 30 շատ անուշիկ օրեր, պէտք է  
մտածենք, մեր հոս, Փարիզ մնացած եղբայրնե-  
րուն վրայ, որոնք զանազան պատճառներով  
չկարողացան օգտուիլ այս բանակումէն, և  
զանոնք ալ յառաջիկայ տարի մեզ հետ տա-  
նինք և ըլլանք փոխանակ 50ի 150 սկաուտ-  
ներ: Ահա՛ բարի գործ մը:

ԹՍՓՍՈՍԿԱՆ ԵՂՋԵՐՈՒ

Հ. Մ. Բ. Մ.ի փարիզի եւ շրջականերու  
սկաուտական խումբերու արշաւ մը կազմա-  
կերպուած էր դէպի Անտիյիի անտառը կիրա-  
կի 15 սեպտ.ին:

Առաւօտուընէ իսկ Անկէնի սկաուտները եւ  
Գայիկները առաջնորդութեամբ իրենց խմբա-  
պետ Սերոբեանի, Պէլվիլի սկաուտները առաջ-  
նորդութեամբ իրենց խմբապետ Ա. Պէրպէրեանի,  
ինչպէս նաեւ ընկերակցութեամբ ծնողքնե-  
րու, մասնաւոր ինքնաշարժով Անկէնի կայա-  
րանէն մեկնեցան Անտիյի:

Կէսօրուան մօտ հասան քօլումպի սկաուտ  
եւ սկաուտուհիները առաջնորդութեամբ ի-  
րենց խմբապետ Հ. Աբէլեանի:

Ամբողջ օրը անցաւ հաճելի կերպով, սկա-  
ուտական դասախօսութիւններով, խաղերով,  
հետախուզութիւններով եւ ֆուտպօլով:

Հայ եւ օտար ներկաները գեղեցիկ եւ հե-  
տաքրքիր ժամանց մը ունեցան:







### ԴԻԻՑԱԶՆՆԵՐՈՒ ԵՐԿԻՐԸ

յ սկսուող պէտք է սորվի իր հայրենիքին դիրքն ու կլիման, եւ իր ազգին նկարագրին գեղեցիկ եւ ներշնչիչ կողմերը: Յաջորդաբար պիտի ջանանք ընտրուած հատուածներ տալ հայ գրականութենէ եւ հայ կեանքէ, որ հայ պատանին ծանօթանայ իր երկրին, իր ազգին պատմութեան եւ մտաւորական արժէքներուն, ան պէտք է գիտնայ թէ, ինք կը պատկանի ազգի մը որ ոչ մէկ բանով վար կը մնալ միւս քաղաքակիրթ ազգերէն: Մէկ բառով՝ կուզենք ներշնչել անոր ազգային հպարտութիւն եւ ինքնագիտակցութիւն:

Ծ. Խ.

. . . Մամիկոնեանները զեռ Մշոյ աշխարհին տէր չեղած, այս աշխարհի զաւակը սրտի քաջութեան եւ ազատասիրութեան մէջ նշանաւոր էր. ես կ'ըսեմ՝ Մամիկոնեանները եկան այս աշխարհին մէջ եւ այս աշխարհի բնակիչներով քաջութեան անուներ միշտ ժառանգեցին, քան թէ զայն իրենց հետ բերին ու անոնց տուին: Կրօնասիրութիւնն ալ սեպհական ձիրք մ'էր այս տեղի Հայոց, թէ կռապաշտութեան մէջ, եւ թէ Աստուածապաշտութեան մէջ եւ զայս կ'ապացուցանէ թէ՛ քուրմերու պատերազմը Տրդատայ եւ Լուսաւորչի զէմ, եւ թէ՛ Վարդանայ, Վահանայ, Մուշեղի, գայլ Վահանին եւ անոր ընկերներուն նահատակութիւնները՝ Պարսից մոգակրօնութեան զէմ:

Մշոյ Հայերը պէտք էր քաջ ըլլային նախով իրենց հայրենիքի դիրքին: Այն ամենի բարձրաբերձ լեռները՝ մեծութիւն մը կ'ազդէին անոնց սրտին. անտառներով մացառներով զարգարուած սարերու զագաթներ եւ ձոցերը, նոյնպէս եւ շամբերը, որոնց մէջ լեցուն գազաններ են. զիրենք կ'ստիպէին զէնքի վարժուիլ թէ՛ որսալու համար եւ թէ՛ պաշտպանուելու համար: Այս ընդարձակ դաշտը, եւ այն մեծատա-

րած երկինքը վեհութիւն եւ վսեմութիւն կ'ազդէին անոնց հոգեոյն, եւ այն պատուական կլիման արդէն զօրաւոր եւ յազթանդամ կը կազմէր անոնց իրանները:

Ջուրերը բոլորն ալ գետեր են, որ չորս կողմի լեռներէն սուր ընթացքով եւ գոռուն գոչուն ձայնով կը վազեն կը թափին եփրատին ձոցը, եւ թէպէտ Մեղրագետն ու եփրատ անձայն կ'ընթանան, բայց այնպէս արագ, եւ այնպէս ահարկու եւ լայնածաւալ պտոյտներով ու հոսանքներով կ'անցնին, որ կարծես անեղ թագաւոր մըն է եփրատը եւ անոր սպարապետն է Մեղրագետը, որոնք ջրային զօրաց մեծ բանակ մը անած՝ գաւառները տիրելով կը վարեն կը դիմեն կռիւի՝ ուրիշ թագաւորներու հետ: Այսպիսի երկիր մը՝ որ քան իր բնակչութիւններուն նպաստաւորիչ է, այնքան ալ իւր մերձաւորներուն եւ ծանօթներուն նախանձը կը զբոսէ, եւ այս պատճառաւ գրեթէ շարունակ կռիւի մէջ ծնած ու մեծցած ըլլալով, մահուանէ չվախցող մարդիկ էին Մշեցիք:

Մշոյ աշխարհը լեցուն է եղած բանաստեղծներով, երգասացներով, բազմաթիւ աշուղներու տեղ է եզեր այս երկիրը եւ այս բնական հետեւութիւն է այն քաջերուն եւ քաջագործութիւններուն, որոնց դիւցազնագործութիւնները կը դիցաբանէին, եւ անոնց թանկագին մահը պէս պէս երգերով կ'եղբերագէին:

Մշոյ այն գեղեցիկ հորիզոնը ուր աչք ձգողին սիրտը ինքնին կը թրթրայ, արիւնը կ'եռայ եւ հոգին կը բարձրանայ:

ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ. ՍՐՈՒԱՆԶՏԵԱՆՑ



Ֆոթօ ԱՐԱՔԱ  
Ստեղծա Բլած (կիրակուրի պատրաստութիւն)





Ֆոթո ԱՐԱՔՍ

ԲԱՆԱԿՈՒՄԻ ՄԷՋ «ԿԵՐԱԿՈՒՐԻ ԲԱԺԱՆՈՒՄ»

### ԱՍԿԷ ԱՆԿԷ


15 տարու սկաուտ մը Օքսֆորտէն, շինած է Անգրատլանտեան շոգենաւի մը նմոյշը, իր բոլոր մանրամասնութիւններով: Շոգենաւը մէկ մէթրի չափ խոշոր է եւ ելեկտրականութեամբ կը շարժի:

Նիւ - Եօրքի գիտական արշաւախումբը Պէրմուտայի մօտ գտած է տեսակ մը ձուկ, որուն առանձգականութիւնը այնքան մեծ է որ, իր հասակին եւապատիկը խոշոր ձուկեր կրնայ կլլել:

Ամերիկայի մէջ հնարուած է մեքենայ մը որ կրնայ 18 վայրկեանէն, իր մէջ տրուած ցօրենէն պիսքիւիներ պատրաստել առանց գործաւորի օգնութեան:

ՃԷՄՊՈՐԻԻ միջոցին պատահեցաւ որ ընդհ. Պետին պրեթէլները փրթին: Շուարած էր եւ չէր գիտեր ինչ ընելը, հասլա եթէ տափառ վար իյնար: Եւ ահա սկաուտական ոգին օգնութեան հասաւ: Ամէն տեսակ նուէրներու կարգին, իրլանտայի սկաուտները խելացութիւնը ունեցած էին օգտակարը ընտրելու եւ բերած էին պրեթէլ մը, իբր նուէր Պետին: Պետը այնքան ուրախացաւ այս անակնկալէն որ, յանպատրաստից հնդկական պար մը պարեց հիացում եւ գուարթութիւն պատճառելով ներկաներուն:

### Գ Լ Խ Ա Ր Կ Ի Խ Ա Ղ




Իւրաքանչիւր խմբակէ մէյմէկ սկաուտ կրկե. նան գէմ դիմաց: Մէջտեղը գետինը կը դրուի գլխարկ մը: Սկաուտները կը ծոին գէպի գլխարկը իրենց աջ ձեռքերը դնելով դիմացինին ուսին վրայ: Իւրաքանչիւր սկաուտ պիտի ջանայ ծրուելով գլխարկը առնել ձախ ձեռքով և փախչիլ, ջանալով որ իւր հակառակորդը չի կարենայ իր կռակին զարնել ձեռքով: Այն սկաուտը որ կը զարնուի խաղէն գուրս կ'ելլէ և իրեն կը յաջորդէ ուրիշ սկաուտ մը իր խմբակէն:

Եւ այսպէսով մինչև որ մէկ խմբակէն բոլոր սկաուտները հատնին: Այն ատեն միւս խմբակը յաղթական կը հռչակուի:

### ՔԱՌԹ ԲՕՍԹԱԼԻ ԽԱՂ

Երկու վայրկեան իւրաքանչիւր սկաուտի աչքին առջև բռնել բաւական կնճոռտ տեսարան մը ներկայացնող քառթ բօսթայ մը: Սուլիչի նշանին ամէն սկաուտ կ'սկսի գծել ձեռքը գտնուած թուղթին վրայ ինչ որ միտքը մնացած էր տեսած քառթ բօսթայէն: Այն սկաուտը որ 10 վայրկեանի մէջ ամէնէն աւելի մանրամասնութիւններ ներկայացուցած է իր գծագրութեան մէջ, կը շահի առաջնութիւնը:





ԽՄԲԱԿԻՆ ՅՈՒՇԱԳԻՐԻՐԸ

Խմբակին մէջ, իր ծագումը ու պատմութիւնը ամփոփող յուշագիրքի մը գոյութիւնը շատ օգտակար է իմ փորձառութիւնս:

Այդ յուշագիրքը կամ հայելին կ'օգնէ մէն կերպով խմբակի մը նոր գաղափարներու մշակման և անոր լաւ ճամբու մը հետեւելուն:

Գաղափարի տեսակէտով ալ, լաւ յուշագիրք մը շատ բան կը սորվեցնէ նոր ընծայութեան թեկնածուներուն՝ աւելի քան առաջնորդը, որովհետեւ ան կը կարգայ այդ գրքքին մէջ խմբակին հիմնադրութենէն սկսած, անոր տուած գասախօսութիւնները, բանակումները, արշաւները, հանրօգուտ եւ զիզեցիկ գործերը վերջապէս անոր զրական ու բարոյական բոլոր գործունէութիւնը:

Այդ յուշագրքին շնորհիւ սկսուածը մեծ սիրով կը կապուի իր խմբակին և կը ջանայ հասնիլ իր ընկերներուն կարողութեան եւ ինքն ալ կ'աշխատի աւելի բան մը ընել:


Ասկէ զատ, այդ գիրքը, խմբակի նախկին սկսուածներուն կը յիշեցնէ այն անուշ օրերը որ վրաններու տակ ապրած են իրարու հետ և այսպէս աւելի ամուր կը կապէ զանոնք իրարու, իսկ նորեկներուն ալ լաւ օրինակ եւ ուղղեցոյց կ'ըլլայ անոնց նեղ օրերուն և գժուարութիւններուն մէջ:

Մեծ բարեկամն է այն խմբակի առաջնորդին որովհետեւ երբ առաջնորդ մը նշմարէ թէ այսինչ արշաւը կամ բանակումը անհաճոյ անցաւ, պիտի գիմէ այդ Յուշագրքին հոն գրանելու համար պատճառները եւ յառաջիկային պիտի սրբագրէ զանոնք, Առաջնորդը հոն պիտի կարգայ թէ՛ այսինչ տեղը կարելի է արշաւ ընել եթէ սա ինչ պայմանները լրացուին, կամ այն ինչ տեղ լաւ ջուր կամ լճակ մը կայ սակայն չափազանց աւազուտ է յոգնալու համար եւ այլն:

Ես այս բաները փորձով տեսած եւ շատ օգտուած եմ, այս պատճառով խորհուրդ կուտամ քեզի, սիրելի առաջնորդ որ անմիջապէս ձեռնարկես խմբակի Յուշագիրքի մը պատրաստութեան եւ կամ եթէ ունիս արդէն իսկ, ջանա՛ մանրամասն կերպով արձանագրել խմբակիդ բոլոր գործունէութիւնը, լաւ եւ գէշ կողմերը որ, օր մը քեզի կամ յաջորդիդ ուղղեցոյց կամ առաջնորդ ըլլայ:

Յառաջիկային կուտամ «Թէ՛ ինչպէս պէտք է ըլլայ Յուշագիրքը»:

Խմբապետ ԺԻՐԱՅԻ







# Գայլիկին անկիւնը

## ԳԱՅԼԻԿՆԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Գայլիկներու գործը ձեռք առած ատեննիս, չկարծենք որ զուարճութեան և ժամանցի համար է միայն, մեր նպատակն է՝ պատրաստել սկաուտներ, այսինքն՝ ապագայ հայ քաղաքացիներ:

Գիտենք որ երկաթը տաք եղած ատեն կը ձեւաւորեն, ինչպէս նաև ծառ մը մատաղ եղած ատեն պատշաճ ձև մը կուտան անոր:

Ուստի հոս ֆրանսա, ինչպէս և ամէն ուր որ Հ. Մ. Ը. Մ. գոյութիւն ունի. պէտք է մեծ ուժ արուի այս գործին, այսինքն Գայլիկներու կազմակերպութեան, որովհետև ինչպէս տեսանք, զանազան օտար հորիզոններու տակ նախ և առաջ 7-11 տարեկան պատանիները գատապարտուած են մոռնալու իրենց հայրենիքն ու լեզուն. ուստի, փութով ընդ առաջ երթանք պատրաստելու վարիչներ որպէսզի իրենց կարգին պատրաստեն Գայլիկներ, ահա՛ էական գործ մը:

Հոս, անձնական փորձառութեամբ պարտք կ'ըզամ շեշտել, թէ (անգլիական, ֆրանսական և բոլոր օտար կազմակերպութեանց մէջ ալ այդպէս է) պէտք է խուսափել արդէն իսկ ծանրաբեռնուած սկաուտ խմբապետի մը կամ ազջիկներու խմբապետուհիին ծանր պարտականութիւններուն վրայ աւելցնել նաև Գայլիկներու խմբապետի մը պաշտօնը, միանգամ ընդ միշտ խուսափինք աշխատանքը խճողելէ, արդիւնքը շատ ֆրասակար կ'ըլլայ, փոխանակ մէկ կողմը լաւ մը զօրացնելու երկու կողմերն ալ կը ֆրասեն, անոր միակ միջոցն է պատրաստել Չ1 էն վեր Գայլիկի մարզիչներ կամ աւելի ճիշդը մասնագիտուհիներ. որոնք աշխատին մի միայն այդ գործին համար:

Գայլիկներու ծագման և օրէնքներու ու գործելակերպին տեղեակ ըլլալ փափաքողները, արատ նիւթ կրնան գտնել Լօրա Պէտրն-Բաուլի Գայլիկներու յատուկ գիրքերուն մէջ:

Ասկէ զատ, թերթիս յաջորդ թիւով, կ'սկսինք Գայլիկներու ծագման, օրէնքներու և գործունէութեան դասընթացք մը՝ մասնաւոր ծրագրով, որուն կրնան հետեւիլ փափաքողները և գրաւոր ու անձնապէս կրնան զիմել մեզ տեղեկութիւն առնելու համար:

Ճ. Մ.

## ՎԱՐՉԱԿԱՆ

### ՏԱՍՆԱՄԵԱԿԸ

Հ. Մ. Ը. Մ. ի տասնամեակին առթիւ, փարիզի Շրջանային վարչութիւնը կազմակերպած է Մարգահանդէս մը — ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ ԽԱՂԵՐ — որուն մէջ մաս կ'առնեն փարիզի եւ արուարձաններու հարիւր սկաուտներ, Գպրոցասէրի մարզկուհիներ եւ ֆրանսայի բոլոր շրջաններէն մարզիկներ, մօտ երեք հարիւր յիսուն հոգի. որոնք պիտի կատարեն տողանցք մը 50 հոգինոց նուագախումբի ընկերակցութեամբ: Ամէն միջոց ձեռք առնուած է հանդէսը փառաւոր եւ կատարեալ ընելու համար:

Հրաւիրուած են ազգային եւ օտար մարմիններ եւ անձեր:

— ՀԱՅ ՍԿԱՈՒՏԻ վերերեւոյնով կ'սկսի Հ. Մ. Ը. Մ. ի նախկին գործունէութիւնը. հին անդամներ եւ ռանդով գործի սկսած են վերակազմելու հումար Հ. Մ. Ը. Մ. ի ընդհանուր կեդրոնը: Արդէն ձեռնարկուած է կազմակերպել փարիզի արուարձանները, հիններուն վրայնոր Մասնաճիւղներ աւելցած են: Անիէր, Ալֆօրվիլ, Սարսէլ, Սէվրան, եւ մօտ օրէն կը կազմուին Կոնէսի, Վիլիէ-ը-Պէլի եւ ուրիշ հայաշատ տեղերու մէջ ալ բոլորին մէջ ալ սկաուտական խումբեր գոյութիւն ունին եւ պիտի ունենան:

Մեր բոլոր շրջաններն ալ ոգեւորութեան մէջ են այս վերակազմութեան առթիւ:

48  
70



# ՄԱՐՄՆԱԿՐԹԱՆԵ

ՄԱՐԶԱԿԱՆ ԲԱԺԻՆ ՀԱՅ ՍԿԱՈՒՏԻ

Գ. ՏԱՐԻ ԹԻԻ 1

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1929

ԵՒ ՄԵՐ ՄԱՐՄՆԱԿԱՆ ԿՈՐՈՎԸ պահպանելու հոգը այնքան ճնշիչ կերպով կը ծանրանայ մեր ուսերուն վրայ որ, մեզ կը ստիպէ այդ ուղղութիւնով ալ լարել մեր ուշադրութիւնը:

Կեանքի պայքարը մէկ չէ հայուն համար, ան՝ միեւնոյն ատեն բարոյական եւ ֆիզիքական կռիւ կը մղէ բաց դաշտի մէջ. պէտք է ամրացնել զայն երկու ճակատներէն:


Կեանքի մէջ, գուժ չկայ պարտուածին համար, կը կոխտեն ու կ'անցնին Գիտնալով այս դառն իրականութիւնը, զրահենք հայ երիտասարդին բարոյական եւ կուրծքը, օժտենք զայն կենսունակ եւ գիմացկուն ֆիզիքականով մը, որ կարենանք պատնիշել ցեղին գոյութիւնը:

Պէտք կա՞յ ըսելու որ գիտակից եւ կշռադատուած ուժն է որ արժէք ունի միայն, կեանքի պայքարին մէջ:

Եթէ կրցանք ըմբռնել այս ճշմարտութիւնը, շատ բան կը շահինք՝ ուժի խնայողութեան տեսակէտով:


Մնացածը պերճանք է միայն:

ՄԱՐՄՆԱԿՐԹԱՆԻ



Ֆոթո արւես

ՓԱՐԻԶԻ ԴՊՐՈՑԱՍԵՐ ՏԻԿԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՍԱՆՈՒՀԻՆԵՐԸ  
Հ. Մ. Ը. Մ.Ի ՄԱՐԶԱՀԱՆԴԻՍԻՆ ՄԷՋ:



320-2000



# ԳԱՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔ



ՊՈՒԿԱՐԱՀԱՅ Դ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ  
և Ա. Ղ. Ե. Բ. Ը

ԵՐԿՈՒ ՄՐՑԱՆԻՇԵՐ ԿՈՏՐՈՒՄԾ: Օգոստ. 28ին Սօֆիայի մէջ, տեղի ունեցած է Պուլկարիոյ տարեկան չորրորդ նաւասարդեան մրցանանդէսը պատկառելի բազմութեան մը և շատ մը հայ և պուլկար բարձրաստիճան անձնաւորութիւններու, լրագրողներու և թղթակիցներու ներկայութեան:

Տարեկան այս մարզանդէսին մասնակցած են Հ. Մ. Ը. Մ.ի Պուլկարիոյ հետեւեալ մասնաճիւղերը Ֆիլիպէ, Պուրկազ, Սօֆիա, Վառնա, Սիլվէն, Ռուսձուզ, Սթ. Զակորա, և Թաթար-փազարճրզ, 45-46 մարզիկներով:

Օրուան նախագահի պաշտօնը ստանձնած է զօրավար Լազարօֆ: Օրուան թագուէի եղած է Տիկ. Ղուկասեան, պատուոյ օրիորդներ ունենալով Օր. Հ. Յովնանեան և Օր. Ա. Փափագեան:


Հոս կուտանք առաջիններու անունները և չափանիշերը:

100 մթր.— Յ. Երեմեան (Վառնա) 12 երկ.,  
200 մթր.— Թ. Տօքթօրեան (Ֆիլիպէ) 26 2)5 երկ.,  
400 մթր.— Մ. Ոսկինարեան (Ֆիլիպէ) 58 4)5 երկ.,  
800 մթր.— Տ. Զաքարեան (Սօֆիա) 2 վ. 22 երկ.,  
1500 մթր.— Տ. Զա-

քարեան (Սօֆիա) 4 վ. 54 4)5 երկվ., Բարձրութիւն ցատկել.— Թ. Տօքթօրեան (Ֆիլիպէ) 1.55 մթր. երկայնութիւն.— Յ. Երեմեան (Վառնա) 6.01 մթր. երեք քայլ.— Յ. Երեմեան 11.34 մթր. Զոզով ցատկել.— Ս. Ժամադորձեան (Ֆիլիպէ) 2.56 մթր. Նիզակ.— Մ. Մովսէսեան (Պուրկազ), 37.67 մթր. Գունդ.— Վ. Պապիկեան (Ֆիլիպէ) 9.55 մթր. Սկաւառակ.— Գ. Մելքոնեան (Ֆիլիպէ) 24.55 մթր.:

Օրուան ախոյեան հանդիսացած է Վառնայէն Յ. Երեմեան որ երեք առաջնութիւն չահած ըլլալով ստացած է Շրջանային Մարզական Յանձնախմբին տրամադրած գեղեցիկ բաժակը:


Մասնաճիւղերու դասաւորումը հետեւեալը եղած է ա. Ֆիլիպէ 76 կէտ, բ. Պուրկազ 26 կէտ, գ. Սօֆիա, 26 կէտ, դ. Վառնա 23 կէտ, ե. Ռուսձուզ 11 կէտ, զ. Սիլվէն 4 կէտ.



ՖՈՒՍ ԱՐԱՔԱՆ  
Յ. Մամիկնեան Յուլիս 20ին 200 մ. թրք աւարտած պահուն.




ՖՈՒՍ ԱՐԱՔԱՆ  
Փարիզի Հ. Մ. Ը. Մ.ի մարզիկները Յուլիս 20ի մարզահանդէսին օրը.



ՖՈՒՍ ԱՐԱՔԱՆ  
Դպրոցատէրի սանուկիները մարզանքի միջոցին





# ՕՏԱՐ

## ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔ


ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ

ՉՈՐՐՈՐԴ ՖԵՐՄԱՆՍԴ. ԳԵՐՄԱՆԻՍ.

Առանց չափազանցությունների է ըսել թէ եղանակին ամենէն մեծ և ամենէն սպասուած ակտիվ մրցումները եղան Չորրորդ Ֆրանսա-Գերմանիա տարեկան հանդիպումին առթիվ: Գերմանիա ինչպէս միշտ այս անգամ ալ յաղթական կը հանդիսանար բայց ոչ նախատեսուած ձևով: Մինչդեռ ֆրանսական շքանակները գիրենք ներկայացնող խումբին համար ջախջախիչ պարտութիւն մը կ'ակնկալէին, գերմանացիք հազիւ 13 կէտի առաւելութեամբ մը կրցին յաղթանակը շահիլ, ֆրանսացիներուն 66 կէտին փոխարէն 79 կէտ ամբողջացնելով: Այս հանդիպումը տեղի ունեցաւ Սեպտ. 1ին Սթատ Քօլոյսի մարզադաշտին մէջ: Տեղի ունեցած 14 մրցումներէն 8 առաջնութիւն գերմանացիք, իսկ՝ 6 առաջնութիւն ֆրանսացիք շահեցան:

Ահաւասիկ արդիւնքներ. — 100 մէթր. Եւարաչէր (Գ.) 10 3)5:

200 մէթր. Տք. Վիշման (Գ.) 21 2)5:



Քէլէր (Ֆր.) 800 մթր, աւարտած պահուն, երկրորդը Տօքթ. Բէլլէր

400 մէթր. Մուլին (Ֆ.) 48 1)5 (ֆրանսայի նոր մրցանիչ):

800 մէթր. Քէլէր (Ֆ.) 1,55 4)5:

1500 մէթր. Լատումէկ (Ֆ.) 3,55 2)5:

5000 մէթր. Տարթիկ (Ֆ.) 15,37 4)5:

110 արգելարչաւ թրօսպախ (Գ.) 15:

4x100 դրօշարչաւ, դրօշի սխալ փոխանցման հետեւանքով արդիւնքը նկատի չէ առնուած:

4x400 դրօշարչաւ (Գերմանիա) 3,17:

Բարձրութիւն. Մէնար (Ֆ.) 1 մ. 90:

Երկայնութիւն. Մայէր (Գ.) 7 մ. 11:


Չող. Վէկէր 3 մ. 80:

Երկաթ. Իւպլէր (Գ.) 14 մ. 71 1/2:


Սկաւառակ. Նօէլ (Ֆ.) 45 մ. 40:

Նիզակ. Միւլէր (Գ.) 61 մ. 60:

Այս մարզահանդէսին ներկաներուն թիւը կը հաշուէր 20-22000:



Ֆրանսա-Գերմանիա ակտիվ մրցումներն Մուլին 400 մթրը աւարտած պահուն



Վէկէր (Գերմանացի) 3 մ. 80 ցատկած պահուն



Ֆրանսա - Գերմանիա նախընթաց մրցումները տուած են հետեւեալ արգիւնքները:

—22 օգոստ. 1926 — Պալի մէջ Գերմանիա կը յաղթէ Ֆրանսայի 127 1/2 կէտի դէմ 89 1)2 ով: Զուխցերիա որ նոյնպէս կը մասնակցէր այս մրցման երրորդ կը հանդիսանար 68 կէտով:

—21 օգոստ. 1927 — Սթաա Քօլումպի մէջ, Գերմանիա կը յաղթէ Ֆրանսայի 89 կէտի դէմ 62 ով:

—2 Սեպտ. 1928 — Պէրլինի մէջ, Գերմանիա կը յաղթէ Ֆրանսայի 84ի դէմ 64 կէտով:

—1 Սեպտ. 1929 — Քոլումպի մէջ, Գերմանիա կը յաղթէ Ֆրանսայի 79ի դէմ 66 ով:

\* \* Գերմանիան ներկայացնող մարզիկներու այս զօրաւոր խումբը, Սեպտ. 11ին Գերմանիայէն մեկնեցաւ Ճարթն, հոն մասնակցելու համար Գերմանիա-Ճարթն մրցումներու:



Մուլին 400 մէթրի յաղթականը

24 ՕԳՈՍՏՈՍ. — Լոնտօնի մէջ Անգլիա առաջին անգամ ըլլալով աթլէթիզմի մէջ մըրցեցաւ Գերմանիոյ հետ և պարտուեցաւ. յայտագիրը այնպէս մը պատրաստուած էր որ անհատական արգիւնքները մէկ կողմ դրուելով իւրաքանչիւր խումբի ընդհանուր արժէքը նըկատի պիտի առնուէր: Գերմանիա 4ի դէմ 8 յաղթանակով առաջին ելաւ. մրցումներն էին՝ դրօշարչաւններ՝ 4×440 եարտա, 4×100 եարտա, 4×120 եարտա արգելարչաւ, 4×880 եարտա, սկաւառակ, բարձրութիւն, ձող, երկաթ, երկայնութիւն և երեք ուրիշ խմբական վազքեր:

\* \* Սթօքհօլմի մէջ առաջին անգամ ըլլալով Շուէտ և Նորվեկիա աթլէթիկ մրցում մը ունեցան, որմէ յաղթական ելաւ Շուէտ 74ի դէմ 98 կէտերով: Շուէտացի Վէնսթրօմ կոտրեց աշխարհի 110 մեթր ցանկարչաւի մըրցանիշը 14 4)10էն:

\* \* Արփաթօնի մէջ ինքնաշարժ կառքեր և հծեւանիւններ կը մրցէին «մըքօրներու օրուան» համար. ընդամէնը 101 արագութեան մրցանիշեր կոտրուեցան. հծեւանիւնով, անգլիացի Լըվէք ժամը 207 քիլ. բրաւ, իսկ ամերիկացի Լէօն Տրէյ իր կառքով 230 քիլ.ի հասաւ. այս արագութիւնը օրուան լաւագոյնն էր:

27 ՕԳՈՍՏՈՍ. — Պերլինի մէջ տեղի ունեցած միջազգային մրցումի մը մէջ անգլիացի մարզիկ Հարբըր կոտրեց աշխարհի «25 քիլօմեթր վազք»ի մրցանիշը 1 ժամ 23 վայրկ. 45 երկ.ով: Նախորդ մրցանիշն էր 1 ժ. 25 20 երկ. և կը պատկանէր ֆինլանտացի հոչակաւոր վազող Քօլէհմայնէնի:

17 ՕԳՈՍՏՈՍ. — Էմիլ Տիւհուր, ծանօթ ֆրանսացի մարզիկը Օրթէզի մէջ կոտրեց Ֆրանսայի երկաթ նետելու մրցանիշը 15 մեթր 10 ս. ով. նախորդ մրցանիշն ալ իրն էր 1 սանդիմ պակասով:

\* \* Փարիզի մէջ մօտ 40 տարիներէ ի վեր գոյութիւն ունի չեխ հոչակաւոր «Սօքօլ»ներուն մէկ մասնաճիւղ, որուն անդամները հիանալի կարգապահութեամբ մը շարաթը երկու անգամ կուզան շարուելու մարզիչին առջեւ. անոնք ալ դաշտ չունին սակայն յաջողած են վարձել Սէն Մանտէի քաղաքապետական մարզարանը, գրեթէ ձրի:

8 ՍԵՊՏ. — Բաալօ Նիւրմի, ֆինլանտացի վազքի ծանօթ ախոյեանը որ երկար բացակայութենէ մը վերջ կը մասնակցեր 3000 մէթր վազքի մրցման մը Վարչավիայի մէջ, պարտուեցաւ բօլօնիացի անծանօթ մարզիկէ մը որ այդ միջոցը կտրած է 8 վ. 51 3)5 երկ.էն:

\* \* Աթլէթիք մրցման մը մէջ Շուէտ յաղթեց ֆինլանտայի 90ի դէմ 93 կէտով:

10 ՍԵՊՏ. — Նիւրմի կրցաւ իր վրէժը լուծել բօլօնիացի մարզիկէն (Բէթքիէվիչ) որ իրեն յաղթած էր 4 օր առաջ 3 քիլօմէթրնոց



վազքի մը մէջ. Նիւրմի այս անգամ 4 մղոն (6436 մէթր) վազքի մրցման մը մէջ յաղթեց յիշեալին 40 մէթր տարբերութեամբ մը, այդ հեռաւորութիւնը կտրելով 15 վ. 35 երկվ.էն:

10 ՍեղՏ. — «Քուր Շնայտէր»ի մրցումներէն հազիւ 4 օր վերջ անգլիացի օդանաւորդ Օրլիպէր կտորեց ջրասաւառնակով արագութեան մրցանիշը 571 քիւ. 195 մէթրի միջինով (ժամական) մը. այն արագութիւնը աշխարհի մէջ ոչ ոք կրցած էր ցարդ ընել, ոչ օդանաւորդ, ոչ ալ ի հարկէ ինքնաշարժ կառքի վարիչ մը:

\* \* \* Հունգարիա և Չեխոսլավաքիա ֆուտբոլի մրցման մը մէջ հաւասար մնացին 1—1ով:

\* \* \*


ՍեղՏ. 27 էն 29 Աթէնքի մէջ տեղի կունենան առաջին Միջպալքան Ոլիմպիական խաղերը, մասնակցութեամբ Յունաստանի, Ռուսմանիոյ, Սերպիոյ և Պուլկարիոյ:

### ԼՈՒՂՈՐԴՈՒԹԻՒՆ

#### ՓԱՐԻՉԸ ԼՈՂԱԼՈՎ ՃԵՂՔԵԼՈՒ ՏԱՐԵԿԱՆ ՄՐՑՈՒՄԸ

Ամէն տարի Սէն գետի վրայ տեղի կ'ունենայ 8 քիլոմէթրի լողալու միջազգային մեծ մրցում մը, այդ և կին հարիւրաւոր լուղորդներու մասնակցութեամբ: Փարիզի ամենէն հետաքրքրական և ժողովրդական լողալու այս մրցումները տեղի կ'ունենան հարիւր հազարաւոր բազմութեան մը ներկայութեան:

Այս տարուանը տեղի ունեցաւ Օգոստ. 25ին



Փարիզ-Պերլին լողալու մրցումներն Վոմբր Բոլօի (ջրագնդակ) խաղ մը


Petit Parisien լրագրի հովանաւորութեան տակ Յաղթանակը շահեցաւ իտալացի կատաղի լուղորդ մը Քօսթօլի որ 8 քիլոմէթրի միջոցը կտրեց 1 ժամ 55 վր. 46 երկվ.էն:

Կիներու մէջ առաջնութիւնը կը շահէր Mlle. Mayeux (Սէրքլը տէ Նաժէօր տը Մարսէյլէն), 2 ժամ 11,20 4)5էն:

Միւսնոյն օրը տեղի ունեցաւ նաև նաւարշաւի հետաքրքրական փորձեր ինչպէս նաև կարճ հեռաւորութեան վրայ զանազան տեսակի լողալու մրցումներ:

\* \* \*

Ֆրանսայի լուչալու ֆէտէրասիօնը Օգոստ. 31ի և Սեպտ. 1ի համար կազմակերպած էր շատ կարեւոր հանդիպում մը Աշխարհի ախոյեան Շուէտացի Արն Պօրկի և Ֆրանսայի ախոյեան Թարիսի միջև 400 և 800 մէթր հեռաւորութեան մը վրայ: Այս հանդիպումը որ մեծ հետաքրքրութիւն և խանդավառութիւն ստեղծած էր, տեղի պիտի ունենար Սթատ Թուրէլի գեղեցիկ լողարանին մէջ որ, ինչպէս կը յիշուի յատկապէս կառուցուած է 1924ին Փարիզի Միջազգային Ոլիմպիականին առթիւ:



Երրեակ ոստուծի գեղեցիկ ձև մը Արն Պօրկ-Թարիս մրցման օրը



Դժբախտաբար Թարխի անակնկալ հիւանդութեան հետեւանքով իր արժէքէն մեծ բան կորսնցուց: Արն Պօրկ այդ երկու օրուան ընթացքին երկու լողալու ցուցադրութիւններ կատարեց 200 և 800 մէթրի վրայ որու ընթացքին կը մրցէր միւսներն ատեն չորս արժէքաւոր լուզորդներու հետ: Այս վերջինները 200 մէթրի մէջ իւրաքանչիւր 50 մէթրին, իսկ 800 մէթրի վրայ ամէն մէկ 200 մէթրին դրօշաբշուի ձեւով փոխն ի փոխ կը շարունակէին լողալ: 200 մէթրի մէջ չորսերու խումբն է որ յաղթեց չուէտացի ախոյեանին իսկ 800ի մէջ այս վերջինն էր որ առաջին կը հասնէր յաղթելով Ֆրանքօ-Պելիժ չորս զօրաւոր լուզորդներու:

Այդ երկու օրուան ընթացքին մասնաւորաբար մեծ հետաքրքրութիւն յառաջ բերին զանազան տեսակի բարձրախիչ ուսումները ֆրանքօ-պելիժ լուզորդներու կողմէ:



Արն Պօրկ Նորվեկացի կատաղի լուզորդ և աշխարհի ախոյեան

# ԲԱՅ ԳՆԴԱԽԱՂ



## ՖՈՒԹՊՈԼ

Ֆուտպօլի եղանակը բացուած է արդէն Ֆրանսայի մէջ. շատ մը արժէքաւոր հայ խաղացողներ արձանագրուած են ֆրանսա խումբերու մէջ, յիշենք անոնցմէ Սարգիս Կարապետեանը որ անցեալ տարի Փարիզի ախոյեանութիւնը շահող Գլիւպ Ֆրանսէ ծանօթ ծանօթ խումբին մէջ լաւ համբաւ մը շահեցաւ և որ այստարի պիտի խաղայ Ռընօ հաստատութեան խումբէն. Ռ. Շահմիրեան, Ա. Պաղտասարեան և ուրիշներ նոյնպէս արձանագրուած են այդ խումբին մէջ: Իսկ մնացեալ հայ խաղացողները ունին Տորք անուն խումբ մը, անցեալ տարի կազմուած, որ զժրախտաբար նշանակելի ոչ մէկ արդիւնք ձեռք բերաւ և որ նոյնպէս պիտի շարունակէ իր գործունէութիւնը — այսինքն քանի մը մրցումներ գաւառի մէջ — այս տարի ալ:

Հ. Մ. Ը. Մ.ի զանազան մասնաճիւղեր ունին ֆուտպօլի խումբեր, որոնք հետու են անչուշտ փոխարինել է Հ. Մ. Ը. Մ.ի անունով նախորդ տարիներ մրցող հայ զօրաւոր խումբը:

ունեցած թիէմօնիէ նախանգի անլէթիք ախոյեանութեան մրցումներուն մէջ ան կրցած է առաջնութիւնը խլել 3 քայլ ցատկելու մէջ 12 մէթր 84 սանիմիով, ինչ որ երկար ատեն ի վեր ոչ մէկ հայ մարզիկ չէր յաջողած: Հայկ մրցանիշը 12.87, յոյս կայ ուրեմն որ կուտրուի 8. Թաշճեանի կողմէ, որուն կը պատկանի նոյնպէս նիզակ նետելու հայկական մրցանիշը:

### ՅԱԿՈՒ ԹԱՇՃԵԱՆ

Թօրինոյի ծանօթ հայ մարզիկը որ այժմ երբ բժիշկ սկսած է գործել հոն, այս տարի չէ կրցած կանոնաւոր հետեւիլ իր փորձերուն, ասով մէկտեղ անցեալ թուիսին վերջերը տեղի





«ՆՈՐ ՇԻՇԼԻ» ՀԱՅ ԽՈՒՄԲԸ

ՔՈՆՍՐՍՆՅՍՅԻ ՄԷՁ

Պօլսոյ «Նոր Շիշլի» Մարզական Միութեան ֆութպօլի ա. խումբը վերջերս Ռուսական գացած է, ուր Բօնսթացայի մէջ մեծ յաջողութիւն մը ձեռք բերած է, մրցելով տեղական երկու խումբերու հետ: Աստնցմէ առաջինը տեղի ունեցած է օգոստ. 31ին, տեղւոյն Բեազիմ Ապտիւլ Հաշիմ թրքական խումբին հետ ուր հայերը փայլուն յաղթանակ մը տարած են Յոլ 0, իսկ երկրորդ և կարեւոր խաղը տեղի ունեցած է յաջորդ օրը կիրակի, նահանգին ամէնէն զօրւոր խումբին՝ Վիքթօրեայի հետ որ երեք տարի Ռուսաստան Երկրի տեղի ունեցած է: Այս մրցումէն ալ «Նոր Շիշլի» խումբը շատ պատուարեր արգիւնքով մը դուրս ելած է 3—3ով հաւասար մնալով, հակառակ իր գործօն անդամներէն երկու հոգիի պակսելուն:

25 ՕԳՈՍՏՈՍ — ՏՈՐՔ խումբը որ ազատ մնացած հայ ֆութպօլիստներէ կազմուած է, տարուան իր առաջին մրցումը կատարեց Տրնքէրքի մէջ, ուր պարտուեցաւ 0—3ով:

1 ՍԵՊՏ. — «Տօրք» խումբը Ապրիլի քաղաքին մէջ պարտուեցաւ տեղւոյն ծանօթ խումբէն 1ի դէմ 2 նշանակէտով:

8 ՍԵՊՏ. — Ռուան քաղաքի արուարձան Գէվիլլիի խումբը յաղթեց հայի. Տօրք խումբին 0 ի դէմ 8 կօլով, Գէվիլլի մէջ:

— Վ. Տէվէճեան կոչուած է ծանօթ C. A. Paris խումբին բերդապահութեան Իսկ Ս. Կարապետեան որ անցեալ տարի մեծ արժէք ցոյց տուաւ Քլիւպ Ֆրանսէ խումբին մէջ, այս տարի կը վարէ C. O. Billancourtի խմբակետութիւնը:

15 ՍԵՊՏ. — Ռէնս քաղաքին մէջ հայկական Տօրք խումբը կը յաղթէ տեղւոյն Բարք-Բօմէրի խումբին 4—0 ով:



Թ Է Ն Ի Ս

ԹԷՆԻՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ Ա. ՄՐՅԱՀԱՆԴԷՍԸ

Թէնիսը մեր մէջ ամենէն նուազ ընդհանրացած խաղերէն մէկը ըլլալով հանդերձ ունինք բաւական թիւով հայ երկսեռ երիտասարդներ որոնք այդ խաղին խանդավառ հետեւորդներն են: Ինչպէս անցեալին, այնպէս ալ ներկայիս Թէնիսի մէջ ունեցած ենք և ունինք միջազգային մրցումներու մէջ փայլուն յաջողութիւններ ձեռք բերող թէնիսիստներ որոնց վերջինը հայ իգական սեռի ներկայացուցիչ մ'է, Օր. Իտա Ադամօֆ:

Փարիզի «Ապագայ» թերթը իր մարզական աշխատակից Ժ. Եաղմուրեանի նախաձեռնութեամբ զեղեցիկ լազափարը յղացած էր հայ երկսեռ խաղացողներու վերապահուած Թէնիսի մրցահանգէս — Թուրնուա — մը կազմակերպելով: Այս թուրնուան տեղի ունեցաւ անցեալ Յուլիսի սկիզբները Փարիզի մօտակայ Քրօնի խաղաղայրերուն վրայ, մասնակցութեամբ 42 խաղացողներու՝ որոնց 6ը օրիորդ: Տեղը կը պակսի մեզի անոնց բոլորին անունները ինչպէս նաև մրցահանգէսին ամբողջական արգիւնքները տալու. բսենք միայն թէ մասնակցողներուն մէջ կը գտնուէին հետեւեալները՝ որոնք Պելճիքայէն այս առթիւ մասնաւորաբար Փարիզ եկած էին. Ճօն Անանեան, պոլսահայ ծանօթ հին ախոյեանը, Ա. Վրոյր և Օր. Լ. Մարեան: Մրցահանգէսին ֆինալ մրցումները հետեւեալ արգիւնքները տուին. —

Սէմբը.— Պ. Ֆրէնկեան յաղթական ձ. Անանեանի 6—4, 4—6, 6—4.

Սէմբը.աամ.— Օր. Իտա Ատամօֆ յղթկն. Օր. Լուիզ Մարեանի 6—0, 6—1.

Տուպը.— Ռ. Բուլճեան և Ք. Քրասիլինիքեան յղթկն. Ա. Կէվրէկ և Վ. Կէվրէկի 6—1, 6—2.

Տուպը միքսթ.— Օր. Ատամօֆ և Ալէն Պէր. նար (\*) յղթկն. Օր. Ժ. Շապանեան և Ժ. Ֆրէնկեանի 6—0, 6—1.


(\*) Այս երիտասարդը որոն մայրը հայուհի մըն է ճնեալ Երամեան անցեալ Յունիսին շահեցաւ Ֆրանսայի բնակարգի արտոնութիւնը:



Աւելցնենք թէ մրցահանդէսին յաղթականները ստացան շքեղ բաժակներ որոնք նուիրւած էին՝ Տեարք Պօղոս Էմէրեանէ, Մ. Մարեանէ և Ք. Ժգտունիէ:



Յաղթականները Օր. Իտա Ատամօֆ, ճախ կողմը Ալէն Պէրնար, Պ. Յրէնկեան, ճօն Անանեան, աջ կողմը Փուլճնան, Քրասիլնիկեան, Ժ. Եաղմուրեան



Թէնիսի Շալկ. Թուրնուայէն Օր. Իտա Ատամօֆ եւ Ալէն Պէրնար

\* \* \* Թէնիսը, Ֆրանսայի համար վերջին տարիներս փառքի ու հպարտութեան լաւագոյն միջոց մը եղած է, շնորհիւ այն չորս ախոյեաններուն՝ Քօչէի, Լաքօսթի, Պօրօթրաի և Պրիւնեօնի, որոնք միջազգային մրցումներուն մէջ փոխն ի փոխ յաղթանակը շահելով աշխարհի բոլոր խաղացողներուն դասաւորման մէջ կը գրաւեն Ա., Բ. և գ. դասերը:

Անցնող ամիսները անոնց ժողովրդական յաղթանակները արձանագրեցին, նախ Մայիս ամիսին փարիզի մէջ տեղի ունեցած Ֆրանսայի ախոյեանութեան մէջ (որուն իգական բաժնին մէջ Օր. Ագամօֆ երեք յաջորդական փայլուն

յաղթանակներով մասնաւոր ուշադրութիւն գրաւեց), վերջացաւ Լաքօսթի յաղթանակով պարտութեան մատնելով աշխարհի լաւագոյն խաղացողները: Յետոյ Յունիսին Անգլիոյ համբաւաւոր Ուիմպլըտընի մրցահանդէսին մէջ, որ կը նկատուի «աշխարհի ախոյեանութեան» իրական մրցահանդէսը, ի յայտ եկաւ ուրիշ Ֆրանսացի մը՝ Քօչէ որ նոյնպէս յաղթանակը կը շահէր: Երկու անգամուն ալ երկրորդ ֆինալիսդը Ժ. Պօրօթրան էր: Ֆրանսացիք եղանակը փակեցին տարբեր յաղթանակով մը, այս անգամ խմբական մրցումներուն մէջ 2 յաղթանակի դէմ 3 յաղթանակով պարտութեան մատնելով Մ. Նահանգները, «Տէյլիս քլըբ»-ի վերջին մրցումին մէջ: Այս յաղթանակը իրաւունք կուտայ իրենց Գրդ անգամ ըլլալով պահելու հոչակաւոր բաժակը՝ զոր շահելու յոյսով ամէն տարի երեսունի մօտ ազգեր իրարու դէմ կը մրցին: Այս բաժակը Ֆրանսացիք 1927ին Ֆիլադելֆիոյ մէջ յաջողեցան խլել Մ. Նահանգներէն: Այս վերջիններն ալ տարիներ առաջ զայն խլած էին Անգլիայէն: Ինչպէս յայտնի է սոյն բաժակը նուիրուած է Լօնտօնի այժմու ամերիկեան դեսպան Մ. Տէյլիսի կողմէ:

ԳՆՏՍԱԶԱՐ

= Օր. Իտա Ատամօֆ թէնիսի հայ փայլուն ախոյեանուհին կը մասնակցէր այստարի Լա Պօլի մէջ կազմակերպուած միջազգային մրցահանդէսին, ուր սէմբլը-տամի մրցումներուն մէջ հասաւ մինչեւ վերջին մրցումը — ֆինալ — և պարտուեցաւ հոչակաւոր անգլիացի խաղացող Միս Պէնէթէ 6—2, 2—6, 6—1ով:

\* \* \*

15 Սեպտ. — Օր. Իտա Ատամօֆ թէնիսի մէջ շահեցաւ Սպանիոյ ախոյեան տիտղոսը երկու խաղի մէջ, առաջինը սէմբլը-տամ և կրկրորդը տուսլը-տամ. այս վերջինը ընկերակցութեամբ Տիկ. Լ. Պէնարէի:

Le Gérant : Diran Pertchemlian